


ԿԱՆԱԶ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

*Զեկուցող՝ Ա. Մարտիրոսյան  
Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի  
բնապահպանության վարչության պետ*

Երևանը դեռևս խորհրդային տարիներից աչքի է ընկել օդային ավազանի աղտոտման բարձր մակարդակով: Անկախության առաջին տարիներին սոցիալ-տնտեսական ճգնաժամի արդյունքում ստեղծված արդյունաբերական կոլապսը համեմատաբար «լուծեց» Երևանի օդային ավազանի աղտոտման խնդիրները: Այս հանգամանքը բերեց քաղաքի երկրաքիմիական վիճակի որակական և քանակական ցուցանիշների որոշակի փոփոխությունների:

Ներկայումս Երևան քաղաքում հաշվառված է մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործություն ունեցող մոտ 420 կազմակերպություն, որից առավել վնասակարներն են «Մաքուր երկաթ», «Արմենիա մոլիբդեն փրոդակշն», «Գաջեգործ», «Գաջ», «Երևան ՋԷԿ» և «Նաիրիտ» ընկերությունները: Օդի և հողի աղտոտման հիմնական պատճառներից են նաև շարունակաբար ավելացող տրանսպորտային միջոցները /միայն Երեւանում հաշվառված է ավելի քան 200 000 ավտոմեքենա/: Նշված գործոնների ազդեցությամբ է պայմանավորված ածխաթթու գազի ավելացումը մոտ 10 անգամ: Բերենք մեկ օրինակ՝ 1000 ավտոմեքենան օրական արտանետում են 3.2 տոննա ածխածնի օքսիդ, 200-400 կգ այլ գազանման նյութեր, 50-100 կգ ազոտային նյութեր:

Նշենք նաև, որ Երևանի բոլոր վարչական շրջաններում հողերը բնութագրվում են աղտոտման գումարային գործակցի /ԱԳԳ/ բարձր մակարդակով.



Այստեղ է, որ մեզ օգնության պետք է հասնեն կանաչ տնկարկները:

Հաշվարկված է, որ 1.0 հա կանաչապատ տարածքությունը օրական կարող է կլանել 8.0 կգ ածխաթթու գազ և այնքան թթվածին արտադրել, որը միանգամայն բավարար է 200 մարդու կանոնավոր շնչառությունն ապահովելու համար: Կանաչ տնկարկներն օդում զգալիորեն պակասեցնում են նաև վնասակար նյութերի (քլոր, ֆտոր, արծաթ, արճիճ, նիկել, մոլիբդեն, ցինկ և այլն) ընդհանուր քանակությունը:

Հետևաբար առաջիկա տարիներին պետք է միջոցներ ձեռնարկվեն, որպեսզի մեկ շնչին ընկնող կանաչ զանգվածը ներկայիս 7.6 քմ-ից հասնի մինչև 12.0-12.5 քմ-ի:


Այդ առումով քաղաքային իշխանությունների և համապատասխան գերատեսչությունների քաղաքականության հիմնական նպատակը բնապահպանական անվտանգության ապահովումն է և կանաչապատ տարածքների ընդլայնումն ու զարգացումը:

Երևան քաղաքի կանաչապատման ներկայիս վիճակը դեռևս բավարար չէ քաղաքի կանաչ տարածքի կազմակերպման համար ներկայացվող ժամանակակից պահանջներին: Տնկարկներն աղքատ են կազմով և կառուցվածքով և, հիմնականում, չեն կատարում իրենց սանիտարական, էկոլոգիական և էսթետիկական գործառույթները: Ծառերի և թփերի այն տեսականին, որն ընդգրկված է եղել Երևան քաղաքի կանաչապատման մեջ, մեծ մասամբ կազմավորվել է պատահական ձևով և

իր մեջ ներառել է քաղաքի պայմանների նկատմամբ ոչ կայուն տեսակներ: Կանաչ տնկարկների ներկայիս վիճակը ցույց է տալիս անթրոպոգեն գործոնների ազդեցության բարձր աստիճան (քաղաքակենտրոնացված տարածքներին բնորոշ), որն օրինաչափորեն հանգեցնում է բուսականության թուլացմանը, ժամանակից շուտ ծերացմանը, հիվանդություններով և վնասատուներով վարակմանը և տնկարկների աստիճանական ոչնչացմանը:

\*\*\*\*

Այսօր, Երևան քաղաքի կանաչ զանգվածը կազմում է 6758.5 հա, որից ընդհանուր օգտագործման կանաչ մակերեսը՝ 852.3 հա: Համեմատության համար նշենք, որ 1990թ. մայրաքաղաքի ընդհանուր օգտագործման կանաչ տարածքը կազմել է 908.3 հա, 2003 թ.՝ 540.0 հա:




Բերված տվյալների հիմքում ընկած է 1990-ական թթ. էներգետիկ ճգնաժամի հետևանքները, ինչպես նաև ծայրահեղ անբավարար վիճակում գտնվող ոռոգման ցանցը և ապօրինի ծառահատումները: Միայն 1990-1995 թթ. մայրաքաղաքում

(հատկապես անտառպուրակներում) հատվել է շուրջ 170 000 ծառ և թուփ, ինչն իր հերթին նպաստեց հողի էրոզիային և փոշու ավելացմանը:


Վերջին 8 տարվա ընթացքում Երևանի քաղաքապետարանի ծրագրով իրականացվել են ոռոգման ցանցերի ընդլայնման, նորերի ստեղծման լայնածավալ աշխատանքներ, ինչն իր հերթին նպաստեց կանաչ տարածքների բարելավմանը, վերականգնմանը և ավելացմանը:

Ոռոգման ցանցերի ընդլայնման և նորերի ստեղծման աշխատանքները նախատեսվում է ավարտել մինչև 2025 թվականը:



Ստեղծված նոր ոռոգման ցանցերի և ինտենսիվ ոռոգման շնորհիվ վերականգնվեցին և վերականգնման փուլում են գտնվում նախկինում կանաչապատ մի շարք զանգվածներ: Հարկ է նշել, որ կանաչապատման ոլորտի դինամիկ զարգացման արդյունքում լուծվում է մայրաքաղաքի ողջ տարածքում կանաչ տարածքների հավասարաչափ և նպատակային բաշխման խնդիրը:

## Զբոսայգիների և պուրակների վերակառուցումն ստեղծում, հա




Վերջին տարիներին Երևան քաղաքի տարբեր վարչական շրջաններում լիովին վերակառուցվեցին, բարեկարգվեցին և ժամանակից ոճով կանաչապատվեցին մի շարք զբոսայգիներ և պուրակներ՝ շուրջ 17 հա մակերեսով:

2011-2014 թթ. ընթացքում ճանապարհաշինարարական աշխատանքներին գույրնթաց մայրաքաղաքի սիզամարզերն ավելացել են շուրջ 20 հա-ով: Վերականգնվել և ստեղծվել են նոր կանաչ սիզամարզեր, որոնք գեղարվեստական, ծաղկային ձևավորումների և բարձրարժեք տնկիների շնորհիվ պատշաճ տեսք են հաղորդել քաղաքի մուտքերին: Ընդհանուր առմամբ մայրաքաղաքի սիզամարզերում տնկվել են շուրջ 4000 ոսկեգույն թույաներ, 10 000 գնդաձև ակացիաներ և 90 000 ծաղկասածիլներ:

Ճանապարհաշինարարության մեջ կանաչապատման էլեմենտների կիրառման հաջող փորձ էր Իսակով-Լենինգրադյան խճուղու կանաչապատումը, որի ընթացքում ստեղծվեց շուրջ 4.5 հեկտար կանաչ տարածք: Տրանսպորտային արտանետումների բացասական ազդեցությունը մեղմելու նպատակով նմանատիպ ծրագրերի իրականացումը կկրի շարունակական բնույթ: Ընդհանուր առմամբ 16.7 հեկտար ժամանակակից կանաչ մակերեսներ են ստեղծվել Երևան-Սևան, Երևան-Աշտարակ, Երևան-Եղվարդ, Արգավանդի մայրուղիներում, Արշակունյաց պողոտայում, Դավիթ Բեկ, Թևոսյան փողոցներում:

## Միգրարգային տարածքների ստեղծում և բարելավում, հա




■ Միգրարգային տարածքների ստեղծում և բարելավում, հա	4.0	7.0	12.0	17.9	18.0	20.0	60.0	120.0
--	-----	-----	------	------	------	------	------	-------

Քաղաքի ծաղկային մակերեսը 2014 թ.-ին հասնում է 7.2 հեկտարի սահմանին: Ծաղկապատման բնագավառում լայն տարածում են գտել բարձրորակ ծաղկասածիլները՝ պետունյա, գացանիա, թավշածաղիկ, կատարանտուս, ռուդրեկյա, այլսում, ագերատում, շան բերան, պելարգոնիում, գեորգենի և այլն:

Ծաղկային տարածքների հիմնման հետ մեկտեղ մեծ հնչողություն են ձեռք բերել սիգամարգերի, զբոսայգիների և պուրակների գեղարվեստական ձևավորումները:



Յուրաքանչյուր տարի գարնանային և աշնանային ծառատունկի ընթացքում մայրաքաղաքի կանաչ զանգվածը համալրվում է շուրջ 30 000 տնկիներով: Ի թիվս մյուս ծառատեսակների՝ Երևան քաղաքի կլիմայական պայմաններից ելնելով առավել արդյունավետ է գնդաձև ակացիաների, սոճիների, կաղնիների, հացենիների, թխկիների տնկումը:



Շնորհիվ բավարար խնամքի և ծառատեսակների ճիշտ ընտրության՝ վերջին տարիներին տնկիների կայունությանը կազմել է 70-75%:

Չնայած վերջին տարիներին կանաչապատման ոլորտում իրականացված հսկայածավալ աշխատանքներին, այնուամենայնիվ չլուծված են մնում մի շարք խնդիրներ: Անթրոպոգեն բեռնվածության կտրուկ բարձրացման ներկայիս պայմաններում Երևան քաղաքի կանաչապատման հիմնախնդիրը ստանում է բացառիկ կարևոր սոցիալական, էկոլոգիական ու տնտեսական նշանակություն և պահանջում է լուծման համալիր մոտեցում:

\*\*\*

Քաղաքի էկոլոգիական իրավիճակը բարելավելու նպատակով հեռանկարում՝ մինչև 2025 թվականը, ծրագրվում է իրականացնել կանաչապատման որոշակի ռազմավարություն՝ հետևյալ ուղղություններով՝

1. Կանաչ տարածքների և բուֆերային գոտիների ստեղծում և վերականգնում,

2. Բակային տարածքների բարեկարգում, կանաչապատում
3. Ուղածիզ կանաչապատում,
4. Մասնագիտացված, կայուն տնկարանի համալրում և զարգացում:

### **1. Կանաչ տարածքների և բուֆերային գոտիների ստեղծում**

Երևան քաղաքի անբարենպաստ կլիմայական և էկոլոգիական պայմաններում անտառ-պուրակներն ունեն սանիտարահիգիենիկ և միկրոկլիմայական պայմանները բարելավելու նշանակություն: Ամռան շոգը, քամիների արագությունը և մթնոլորտային աղտոտումը մեղմացնելու նպատակով նախատեսվում է ստեղծել խիտ տնկարկներ, որոնք կազմված կլինեն 60-80 տոկոս ծառերից և թփերից, իսկ 15-20 տոկոս սիզամարգերից:

Կիսասանապատային գոտիներում, որտեղ գտնվում է Երևանը, նախատեսվում է հիմնել (տնկել) չորադիմացկուն, հողի նկատմամբ ոչ պահանջկոտ ծառատեսակներ և թփեր: Այստեղ պետք է գերակշռեն ստվերոտ ծառուղիներով խիտ կանաչ զանգվածները, առկա լինեն ջրավազաններ: Անտառ-պուրակի կարևոր տարր է համարվում սիզամարգը՝ և էկոլոգիական և գեղագիտական տեսակետից:


Երևանի «Եռաբլուր» պանթեոնի կանաչ գոտու /60 հա/, «Փարոսի» անտառի /30 հա/, Շամպայն գինիների գործարանին հարող անտառպուրակի /Կորեայի ձոր/ / 60 հա/, Սարալանջի / 3000 քմ/ և «Ծիծեռնակաբերդի» հուշահամալիրի կանաչ գոտու /95 հա/ վերականգնումը և նոր կանաչ տնկարկների հիմնումը շատ կարևոր է, քանի որ այդ տարածքները Երևան քաղաքի համար հանդիսանում են բուֆերային գոտիներ, ունեն էկոլոգիական մեծ նշանակություն /փոշեկլանիչ, քամիները մեղմացնող, քաղաքային կենսաբազմազանությանը նպաստող, ռեկրեացիոն և այլն/: Հետևաբար կանաչապատման միջոցառումները կնպաստեն ազգաբնակչության առողջության բարելավմանը՝ ստեղծելով նրանց համար զբոսանքի և հանգստի համար հարմարավետ պայմաններ:

Այդ նպատակով վերը նշված կանաչ տարածքներում նախատեսվում է իրականացնել զանգվածային ծառատնկման, նոր ռոզման ցանցերի և պոմպակայանների ստեղծման, ծառերի սանիտարական էտման և այլ աշխատանքներ:



## 2. Բակային տարածքների բարեկարգում, կանաչապատում

Բնակչության հանգստի կազմակերպման համար մայրաքաղաքում անհրաժեշտ պայմաններ ստեղծելը հանդիսանում է գերակա խնդիր, որի լուծման նպատակով իրականացվում են նոր հանգստի գոտիների ստեղծման և բակային տարածքների ու խաղահրապարակների հիմնանորոգման ու պահպանման աշխատանքներ:



Բակերի բարեկարգման աշխատանքների, ինչպես նաև քաղաքացիների ակտիվ հանգստի կազմակերպման և առողջ ապրելակերպի խթանման նպատակով մեծ ուշադրություն է հատկացվում մինի ֆուտբոլի դաշտերի ստեղծմանը:

Ծրագրի առաջնային գերակայությունն է մինչև 2025թ. բազմաբնակարանային շենքերի բոլոր բակային տարածքներում իրականացնել բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ:

### 3. Ուղղաձիգ կանաչապատում

Քաղաքի ինտենսիվ կառուցապատման պայմաններում կանաչապատման ոլորտում հույժ կարևոր միջոցառում կարող է հանդիսանալ ուղղաձիգ կանաչապատումը: Մինչև 2025 թ. անհրաժեշտ է կիրառել ուղղաձիգ կանաչապատման լայն ծավալի աշխատանքներ, կիրառելով փաթաթվող և սողացող բույսեր, որոնցով կանաչապատում են շենքերի պատերը: Նախատեսվում է Երևանի ուղղաձիգ կանաչապատման համար տնկարանային տնտեսությունում հիմնել և բազմացնել՝ լիանաների, կուսական խաղողի, բաղեղի թփատեսակները:

Ուղղաձիգ կանաչապատումը հնարավորություն է տալիս ոչ մեծ մակերեսի վրա ստանալ առավելագույն կանաչ զանգված, քանի որ վերոհիշյալ բույսերն աճում են և բազմանում շատ արագ՝ ստեղծելով գեղեցիկ դեկորատիվ պատկերներ: Հետագա 10 տարիների ընթացքում նախատեսվում է ուղղաձիգ կանաչապատման էլեմենտների օգտագործում՝ մայրաքաղաքի տարբեր փողոցներում շենքերի և շինությունների ֆասադներին գեղագիտական տեսք հաղորդելու նպատակով:



#### 4. Տնկարանի համալրում և զարգացում

Կանաչից զուրկ տարածություններում 3 անգամ ավելի շատ փոշի է նստում, քան կանաչապատ տարածքներում: Իսկ բույսերի փոշեպաշտպան դերում մեծ նշանակություն ունեն ծառերի սաղարթների մեծ մակերեսները:

Աղյուսակում ներառված են այն ծառատեսակները, որոնք առավել օժտված են փոշե և գազակլանիչ, ծանր մետաղների ազդեցությունը նվազեցնող հատկություններով և որոնք նախատեսվում է հիմնել տնկարանում և դրանց արտադրությունը կազմակերպել չընդհատվող և շարունակական ռիթմով:

N	Բուսակների տեսականին	Տերևի 1մ <sup>2</sup> մակերեսի վրա նստած փոշու քանակությունը (մգ)	Փոշենստման արդյունավետությունը (գ/մ <sup>2</sup> )	Նախատեսվող բուսակների տնկում (հատ)
1.	Ուռենի սպիտակ	9028	1805	5 000
2.	Կաղնի ամառային	4545	1045	10 000
3.	Կաղնի խորդուբորդ	3289	789	5 000
4.	Թեղի տերևաշատ	5136	770	5 000
5.	Թխկի հացենատերև	2460	590	10 000
6.	Հացենի սովորական	2030	426	15 000
7.	Բարդի կանադական	1128	338	5 000
8.	Կեչի թավոտ	4428	313	3 000
9.	Թխկի անտառային	4138	248	5 000
10.	Բարդի սպիտակ	1019	183	10 000
11.	Խնձորենի	2811	126	2 000
12.	Թխկի թաթարական	1952	78	5 000
13.	Թխկենի սովորական	1583	71	5 000
14.	Արսսենի սովորական	2091	46	5 000
	<b>Ընդամենը</b>	-	-	<b>90 000</b>